ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞վ է նշված խոսքերի հեղինակը. «Սիրել չի նշանակում նայել միմյանց: Սիրել նշանակում է նայել միևնույն ուղղությամբ».

1. Պլատոն
2. Արիստոտել
3. Անտուան դը Սենտ-Էքզյուպերի
4. Խրիմյան Հայրիկ

2. Ո՞ր դեպքում կարող է սահմանափակվել քաղաքացու իրավունակությունը

1. Եթե քաղաքացին սահմանափակել է ինքն իրեն իրավունքի սուբյեկտ լինելուց
2. Եթե դատական ընթացակարգով քաղաքացին հոգեկան խանգարման հիմքով անգործունակ է ճանաչվել
3. Եթե քաղաքացին պայմանագրով պարտավորվել է չզբաղվել ձեռնարկատիրությամբ
4. Եթե քաղաքացին հրաժարվել է իր իրավունքներից ի օգուտ բարեկամների կամ հարազատների

3. Հունարեն «էթնոս» բառը թարգմանվում է.

1. Հայրենիք
2. Ազգ
3. Պետություն
4. Հանրույթ

4. Ի՞նչ է անհրաժեշտ «պայմանագիր» գործարքի համար

1. Ֆինանսական ու քաղաքական գրագիտություն
2. Իրավական կրթության առկայություն
3. Երկու եւ ավել կողմ պայմանագիր կնքելու համար
4. Երկու եւ ավել քաղաքացի սահմանափակ իրավունակությամբ

5. Նշվածներից ո՞րը համագործակցությանն ու համակեցությանը առնչվող հասկացություն չէ

1. Հոգատարություն
2. Հավատարմություն
3. Եսասիրություն
4. Հավասարակշռվածություն

6. **Պնդումներից ո՞րն է սխալ**

1. Ամուսնության համար հարկավոր է ամուսնացողների փոխադարձ համաձայնությունը

2. Անձը կարող է ամուսնանալ նաեւ 17 տարեկանում, եթե առկա է ծնողների, հոգաբարձուների կամ որդեգրողների համաձայնությունը

3. Թույլատրվում է ամուսնությունը 14 տարին լրացած անձի հետ՝ ծնողների, հոգաբարձուների կամ որդեգրողների համաձայնությամբ եւ, պայմանով, որ մյուս կողմի 18 տարին լրացած է

4. Ամուսնությունն արգելվում է այն անձնաց միջեւ, որոնցից զոնե մեկին դատարանը ճանաչել է անգործունակ

7. Նշվածներից ո՞րն է ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածը.

1. Հայաստանի Հանրապետությունը ազատ, անկախ, ինքնիշխան, սոցիալական, իրավական պետություն է

2. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին

3. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդական, իրավական պետություն է

4. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է

8. Պնդումներից ո՞րն է ճիշտ

1. Ծնողական իրավունքները երբեմն կարող են իրականացվել երեխաների շահերին հակառակ

2. Ծնողները պարտավոր չեն ապահովել երեխաների կրթություն ստանալը

3. Երեխան իր ծնողներից եւ ընտանիքի այլ անդամներից ապրուստի միջոց պահանջելու իրավունք ունի

4. Ծնողները կարող են վնասել երեխայի բարոյական զարգացմանը

9. Պետական իշխանության համակարգում սովորաբար քանի՞ հիմնական ճյուղ է առանձնացվում

1. Չորս
2. Երեք
3. Երկու
4. Մեկ

10.Պնդումներից ո՞րն է սխալ.

1. Ժողովրդավարական հասարակությունում առաջնորդությունը հասարակական ազդեցության գործընթաց է, որում անհատը կարողանում է համոզել կամ ազդել խմբին՝ որևէ համատեղ նպատակի հասնելու կամ հասարակական հիմնախնդիր լուծելու համար։

2. Արդարությունն ունի երկու «երես»՝ իրավական և բարոյական, որոնցից առաջինը կարգավորվում է օրենսդրությամբ, իսկ երկրորդը՝ հասարակական կյանքի այն կանոններով, որոնք անվանում են բարոյական նորմեր։

3. Իշխանությունների բաժանման գաղափարն առաջիններից մեկն արծարծել է նոր ժամանակների անգլիացի մտածող Ջոն Լոքն իր «Օրենքների ոգու շուրջը» աշխատության մեջ։

4. 17-րդ դարի հոլանդացի իմաստասեր Բ. Սպինոզան հետևյալ ուշագրավ միտքն է արտահայտել.«Ազատ կանվանեմ նրան, ով ղեկավարվում է միայն գիտակցությամբ»։

11. Նշված մտածողներից ո՞վ է գեղեցիկը դիտել օգտակարն ու նպատակահարմարը՝ նկատելով, որ իրենում օգուտ չպարունակողը չի կարող գեղեցիկ համարվել.

1. Սոկրատես
2. Պլատոն
3. Յոհան Վինկելման
4. Արիստոտել

12. Միջնադարի հայ մեծ մտածող Դավիթ Անհաղթը արվեստները բաժանում էր երկու խմբի.

1. Տարածական և ժամանակային արվեստներ
2. Օգտակար և անօգուտ արվեստներ
2. Հաճելի և տհաճ արվեստներ
3. Կրթող և դաստիարակող արվեստներ

13. Գտեք ավելորդ պայմանը, որի դեպքում մինչեւ 14 տարեկան անձը կարող է համարվել աշխատող

1. Եթե աշխատանքը չի վնասում նրա առողջությանը
2. Եթե աշխատանքը չի խոչընդոտում նրա կրթությանը
3. Եթե աշխատանքը գերազանցում է շաբաթական 42 ժամը
4. Եթե աշխատանքը չի վնասում նրա բարոյականությանը

14. Նշվածներից ո՞րը արտադրության գործոն չէ.

1. Կապիտալը
2. Բնական ռեսուրսը
3. Աշխատանքը
4. Վարկը

15. Ո՞րը չի մտնում պետության արտաքին գործառույթների մեջ

1. Համաշխարհային իրավունքի պահպանության գործառույթը
2. Միջազգային խաղաղության, անվտանգության ապահովման գործառույթը
3. Երկրի զինված ուժերի հարձակվողական գործառույթը
4. Դիվանագիտական գործառույթը

16. Նշվածներից ո՞րը տնտեսության հիմնական նպատակներից չէ.

1. Գների կայունության ապահովում
2. Եկամուտների վերաբշխում
3. Ֆոնդային բորսաների ստեղծում
4. Լրիվ զբաղվածության ապահովում

17. Ներքոշարադրյալներից ո՞րը միջազգային իրավունքի սուբյեկտ չէ

1. Միջազգային կազմակերպությունները
2. Ինքնիշխան պետությունը
3. Պետականակերպ կազմավորումները
4. Անդրազգային կորպորացիաները

18. Արիստոտելը որպես գեղեցիկի բնագավառ դիտարկում է արվեստը՝ ընդունելով, որ գեղեցիկ է.

1. Օգտակարն ու նպատակահարմարը
2. Միասնականն ու համամասնականը
3. Ներդաշնակն ու տիեզերականը
4. Չափավորն ու կարգավորվածը

19. Պնդումներից ո՞րն է ճիշտ.

1.«Մոդա» բառը ծագում է իտալերեն «մոդ» բառից, որն էլ իր հերթին գալիս է ֆրանսերեն «մոդուս» եզրույթից, որը նշանակում է չափ, եղանակ, կանոն։

2. Պարը, ըստ որոշ մտածողների, արվեստի տեսակներից բարձրագույնն է, քանի որ այն հնարավորություն է տալիս անմիջականորեն զգալ ներդաշնակությունը, վեհ-գեղեցիկն ու տիեզերական անսահմանությունը։

3. «Կինո» բառը ծագում է հունարեն «կինեո»՝ շարժել, շարժվել բառից։ Արվեստի այս տեսակն այսպես է կոչվել, քանի որ կինոյի գյուտարարներ Լյումիեր եղբայրներին հաջողվել է շարժել պատկերները՝ դրանց հաղորդելով կյանք։

4. Կա արվեստի դասակարգման մի ավանդական սկզբունք, ըստ որի արվեստները բաժանվում են երեք խմբի՝ տարածական, ժամանակային եւ գործնական։

20. Նշվածներից ո՞րը պատժին ներկայացվող պահանջ չէ.

1. Այն պետք է գործադրվի հիմնավորված
2. Այն պետք է գործադրվի կանոնների և նորմերի համաձայն
3. Այն պետք է գործադրվի ոչ իրավասու մարմնի կամ անհատի կողմից
4. Այն պետք է լինի տհաճ

21. Նշվածներից ո՞րն է սխալ.

Դավիթ Անհաղթը մարդու հոգին բաժանում էր երեք մասի՝ բանական, կամային /ցասմական/ և ցանկական, որոնցից յուրաքանչյուրն իր որոշակի առաքինությունն ունի։ Դրանք են՝

1. Խոհականություն
2. Արիություն
3. Ողջախոհություն
4. Ազատություն

22. Առաջարկը կոչվում է առաձգական, եթե.

1. Գնի տոկոսային փոփոխությունը հանգեցնում է առաջարկի ավելի մեծ տոկոսային փոփոխության
2. Պահանջարկի հետ հավասարակշռված է
3. Գնի տոկոսային փոփոխությունը հանգեցնում է առաջարկի ավելի փոքր տոկոսային փոփոխության
4. Գնի և առաջարկի փոփոխությունները հավասար են

23. Ո՞ւմ են պատկանում հետեւյալ խոսքերը. «Պատերազմն օրինական եւ անհրաժեշտ է, երբ առանց դրա անհնարին է խաղաղության ապահովումը»։

1. Իմանուիլ Կանտ
2. Թոմաս Հոբս
3. Պոլ Հոլբախ
4. Կարլ ֆոն Կլաուզեւից

24. Պնդումներից ո՞րն է ճիշտ

1. ինտուիցիայի հիմնական հատկանիշներն են կանխատեսելիությունն ու գիտակցվածությունը
2. Նույն տրամաբանությամբ մարդիկ չեն նկատում իրենց տեսակետների խոցելի կողմերը
3. ինդուկցիայի դեպքում միտքն ընդհանուրից գնում է դեպի մասնավորն ու եզակին
4. Եզնիկ Կողբացու համար մարդը անմահ էակ է

25. Հին Հունաստանում «երջանկություն» բառը՝ Էվդեմոնիա, բառացիորեն նշանակել է.

1. Աստվածների հովանու տակ գտնվող մարդու հաջողություն
2. Աստվածների հովանու տակ գտնվող մարդու կյանքի գերագույն նպատակ
3. Աստվածների հովանու տակ գտնվող մարդու ճակատագիր
4. Աստվածների հովանու տակ գտնվող մարդու երազանք

26. Ո՞ւմ են պատկանում հետեւյալ խոսքերը. «Որքան շատ օրենքներ ու կարգադրություններ հրատարակվեն, այնքան երկրում կշատանա գողերի ու ավազակների թիվը»:

1. Պարույր Սեւակ
2. Ակսել Բակունց
3. Լաո Ցզի
4. Մահաթմա Գանդի

27. Ովքե՞ր են համարվում երրորդ հերթի ժառանգներ՝ ըստ օրենքի ժառանգության կատարման ժամանակ.

1. Ժառանգատուի հարազատ, համամայր կամ համահայր եղբայրները և քույրերը
2. Ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը
3. Ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները
4. Ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը /հորեղբայրները, հորաքույրերը, քեռիները, մորաքույրերը/

28. Ո՞ւմ է պատկանում «բոլորի դեմ բոլորի պատերազմը» ասույթը

1. Բենեդիկտ Սպինոզա
2. Ռենե Դեկարտ
3. Թոմաս Հոբս
4. Միշել Մոնտեն

29. Երեխայի անվան և /կամ/ ազգանվան փոխելը կարող է կատարվել երեխայի համաձայնությամբ, եթե.

1. Լրացած է երեխայի 14 տարին
2. Լրացած է երեխայի 16 տարին
3. Լրացած է երեխայի 10 տարին
4. Լրացած է երեխայի 18 տարին

30. Աշխատանքային օրերի միջև ընկած անընդմեջ հանգստի տևողությունը չի կարող պակաս լինել.

1. 11 ժամից
2. 8 ժամից
3. 15 ժամից
4. 10 ժամից

31. Ո՞րն է հոգեբանության խնդիրը

1. մարդուն մոտեցնել աստծուն
2. զարգացնել մարդու գեղագիտական ընկալումները
3. մաքրել մարդու մեղքերը
4. օգնել մարդու բացահայտելու իր ներուժը

32. Ո՞րն է գլոբալացման դրական ազդեցություններից մեկը

1. մարդու մոտ առաջանում է լոկալ ինքնություն
2. մարդը պարփակվում է սեփական սահմաններում
3. մարդը դառնում է հանդուրժող ու մարդասեր
4. մարդու համար կարեւոր է դառնում միայն սեփական անձն ու ազգը

33.Պնդումներից ո՞րն է սխալ.

1. Գործատուն աշխատանքային հարաբերությունների այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և /կամ/ օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը։

2. Աշխատանքային պայմանագրերը, ըստ իրենց գործողության ժամկետի, լինում են որոշակի ժամկետով։

3. Գործադուլը մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի ժամանակավոր դադարեցում է այն դեպքում, երբ կոլեկտիվ աշխատանքային վեճը հնարավոր չի եղել լուծել այլ կերպ։

4. Աշխատողն օրենքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի։

34. Նշված մտածողներից ո՞վ է առաջարկել պետական իշխանությունը բաժանել երեք անկախ և իրար հակակշռող ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական.

1. Ջոն Լոք
2. Շառլ Մոնտեսքիո
3. Ժան-Ժակ Ռուսո
4. Վոլտեր

35. Նշվածներից ո՞րը պետության արտաքին քաղաքականության կառավարման գործադիր մարմին չէ.

1. Կառավարություն
2. Արտաքին գործերի նախարարություն
3. Ազգային ժողով
4. Հանրապետության նախագահ

36. Ո՞վ է «Հավերժական խաղաղություն» ծրագրի հեղինակը.

1. Իմանուիլ Կանտ
2. Պոլ Հոլբախ
3. Կարլ ֆոն Կլաուզևից
4. Թոմաս Հոբս

37. Շուկայական տնտեսությունում բարիքների բաշխման գործառույթը փոխանակման միջոցով իրականացնում են.

1. Սոցիալական ոլորտի աշխատողները
2. Ներդրումային ֆոնդերը
3. Գնորդներն ու վաճառողները
4. Գործարարների միությունները

38. Գործազրկությունը, որը պայմանավորված է գիտատեխնիկական առաջընթացով՝ բնորոշ է.

1. Ֆրիկցիոն գործազրկությանը
2. Կառուցվածքային գործազրկությանը
3. Պարբերաշրջանային գործազրկությանը
4. Սեզոնային գործազրկությանը

39. Ստորև նշվածներից, ո՞րը տնտեսական բարիք չէ.

1. Մակընթացություն
2. Հեռուստացույց
3. Հեծանիվ
4. Համացանց

40. Պնդումներից ո՞րն է սխալ.

1. Փողը փոխանակման միջոց է
2. Տնտեսագիտության «հայրը» Ադամ Սմիթն է
3. ՀՆԱ-ն պետական ծախսերի հանրագումարն է
4. Պահանջարկը գնողունակ պահանջմունքն է

41. Այս տեսության կողմնակից փիլիսոփաները ասում են, որ Աստված իրական է, և իրականությունն էլ Աստված: Ի՞նչ անունով է հայտնի այս տեսությունը.

1. մոնոթեիզմ
2. աթեիզմ
3. ագնոստիցիզմ
4. պանթեիզմ

42. Ինչպե՞ս է կոչվում Ֆրանսիայի Հանրապետության խորհրդարանը

1. Կոնգրես
2. Ծերակույտ
3. Ազգային ժողով
4. Համայնքների պալատ

43. Կատարե՛լ համապատասխանեցում.

ա/ հատուկ պետական մարմին, որն օրենքի հիման վրա կատարում է իրավաբանական գործողություններ, ինչպես նաեւ հաստատում է իրավաբանական փաստեր

բ/ սուբյեկտի օրենքով ճանաչված ընդունակությունը ունենալ իրավունքներ եւ կրել պատասխանատվություններ:

գ/գիտակցված, նպատակմղված գործողություններ, որոնք կատարմամբ անձինք ձգտում են հասել որոշակի իրավական հետեւանքների

դ/ սուբյեկտի ունակությունն է ինքնուրույն՝ իր գործողություններով ձեռք բերել եւ իրականացնել իրավունքներ, իր համար ստանձնել պարտականություններ եւ կատարել դրանք

1. իրավունակություն
2. գործունակություն
3. գործարքներ
4. նոտարիատ

1. գ-4, բ-2, ա-3, դ-1
2. բ-1, գ-3, դ-2, ա-4
3. գ-2, բ-1, դ-3, ա–4
4. բ-1, ա-2, գ-3, դ-4

44. Կատարել համապատասխանեցում

ա/Տարածքային հիմունքներով կազմված մեկ միասնական հանրույթ
բ/Մարդկության կամ ազգի նյութական և հոգևոր արժեքների ամբողջություն
գ/Լեզվական, մշակութային և կրոնական ընդհանրություններով էթնիկական խումբ
դ/Համագործակցության, հանդուրժողականության և փոխլրացման հիմքով միջավայր

1. Համակեցություն
2. Ազգ
3. Մշակույթ
4. Համայնք

1. ա-4, բ-2, գ-1, դ-3
2. ա-3, բ-4, գ-2, դ-1
3. ա-4, բ-3, գ-2, դ-1
4. ա-3, բ-4, գ-1, դ-2

45. կատարել համապատասխանեցում

ա/ ուսումնասիրում է մարդկանց միջեւ առաջացող իրավական հարաբերությունները
բ/ մարդուն ուսումնասիրում է որպես քաղաքական հարաբերություններ իրականացնող անձի
գ/ մարդուն ուսումնասիրում է որպես տնտեսություն վարող էակի
դ/ ուսումնասիրում է մարդուն որպես հոգեկան կյանք ունեցող էակի

1. հոգեբանություն
2. իրավագիտություն
3. տնտեսագիտություն
4. քաղաքագիտություն

1. ա-1, բ-4, գ-3, դ-2
2. դ-1, ա-4, գ-3, բ-2
3. դ-1, բ-4, գ-3, ա-2
4. դ-1, բ-4, ա-3, գ-2

46. կատարել համապասխանեցում

1. Գործարարությունը պատերազմ է։
2. Այն ինչ շահավետ է հացթուխին, վնասաբեր է գնորդին
3. Ջուրն ավելի մեծ օգտակարություն ունի ադամանդի համեմատությամբ, բայց ինչու՞ է ջրի գինն ավելի ցածր ադամանդի գնից։
4. Սեփականության կտրուկ անհավասարությունը պետության հավասարակշռության համար վտանգավոր է։

Ա. Արիստոտել
Բ. Մ. Մոնտեն
Գ. Թ. Թյորներ
Դ. Ա. Սմիթ

1. ա-4, բ-1, գ-2, դ-3,
2. ա-4, բ–2, գ-1, դ–3
3. ա-3, բ-4, գ-2, դ-1
4. ա-2, բ-3, գ-4, դ-1

47. կատարել համապատասխանեցում

ա/ գանձվում է լայն սպառման բարիքների վաճառքից ու ծառայություններից՝ հարկման դրույքաչափ սահմանելու միջոցով, որը հանգեցնում է դրանց գների և սակագների բարձրացման։

բ/ գանձվում է ոգելից խմիչքներից, ծխախոտից, նավթամթերքից և զարդեղենից

գ/սահմանվում է գույքի և եկամտի նկատմամբ

դ/ պետական տարբեր ծառայությունների դիմաց տրվող վճարներ

1. ուղղակի հարկ
2. ակցիզային հարկ
3. անուղղակի հարկ
4. տուրքեր

1. ա-3, բ-2, գ-1, դ-4
2. ա-1, բ-2, գ-4, դ-3
3. ա-2, բ-4, գ-3, դ-1
4. ա-2, բ-3, գ-4, դ-1

48. կատարել համապատասխանեցում

ա/ ՀՀ Սահմանադրության ընդունում

բ/ ՀՀ անկախության հռչակագրի ընդունում

գ/ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների առաջին հանրաքվե

դ/ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների երկրորդ հանրաքվե

ե/ ՀՀ անկախության հանրաքվե

1. 2005 թ.նոյեմբերի 27
2. 1990 թ.օգոստոսի 23
3. 1995 թ.հուլիսի 5
4. 1991 թ.սեպտեմբերի 21
5. 2015 թ դեկտեմբերի 6

1. ա-4, բ-2, գ-5, դ-3, ե-1
2. ա-3, բ-2, գ-1, դ-4, ե-5
3. ա-3, բ-2, գ-1, դ-5, ե-4
4. ա-2, բ-4, գ-3, դ-5, ե-1

49. կատարել համապատասխանեցում

ա/ Դառնալ հասուն տղամարդ, նշանակում է ձեռք բերել այն լրջությունը, որ ունեիր երեխա ժամանակ… խաղալիս…

բ/ եթե ուզում ես հասնել բարձունքին, ներշնչանք գտիր աշխատանքի մեջ

գ/ մարդը խաղացող էակ է

դ/ սերը մարդու համար դեռեւս այն է, ինչ բանականությունը կենդանու համար, այսինքն՝ անորոշ հնարավորություն

1. Յոհան Հայզինգա
2. Վլադիմիր Սոլովյով
3. Ֆրիդրիխ Նիցշե
4. Համո Սահյան

1. 1-գ, 4-բ, 3-ա, 2-դ
2. 1-ա, 4-գ, 3-բ, 2-դ
3. 1-բ, 4-գ, 3-դ, 2-ա
4. 1-գ, 4-ա, 3-դ, 2-բ

50. կատարել համապատասխանեցում

ա/ Նորմեր, որոնք նախատեսում են պետական հարկադրանքի ազդեցության միջոցներ իրավախախտման համար։

բ/ Նորմեր, որոնք նախատեսում են իրավահարաբերության մասնակիցների իրավունքները և պարտականությունները։

գ/ Նորմեր, որոնք հնարավորություն են տալիս կատարելու որոշակի դրական գործողություններ՝ երաշխավորված մյուս անձանց որոշակի պարտականություններով։

դ/ Նորմեր, որոնք սահմանում են պահանջվող վարքագիծ։
ե/ Նորմեր, որոնք պարտադրում են իրավահարաբերության մասնակիցներին չկատարել արգելված գործողությունը՝ սահմանելով նաև սանկցիան։

1. Իրավազորող
2. Իրավապահպան
3. Արգելող
4. Կարգավորիչ
5. Պարտադրող

1.ա-2, բ-4, գ-3, դ-1, ե-5
2. ա-4, բ-1, գ-3, դ-2, ե-5
3.ա-2, բ-4, գ-1, դ-5, ե-3
4.ա-5, բ-2, գ-3, դ-4, ե-1

51. Պնդումներից որո՞նք են սխալ

1. Ճշմարտության չափանիշ չի կարող լինել սոսկ այն հանգամանքը, որ մարդկանց մեծ մասը հավատում է տվյալ տեսակետին

2. ինդուկցիայի էությունը մասնավոր փաստերի ուսումնասիրության հիման վրա կանոնների դուրսբերումն է, ընդհանրացումների կատարումը

3. քննադատաբար մտածող մարդը չի ընդունում այլոց կարծիքները

4. ոչ բոլոր մարդիկ են օժտված ստեղծագործ մտածողությամբ

5. ստեղծագործականությունը առկա է կյանքի բոլոր ոլորտներում

52. Ընտրե՛ք ճիշտ պնդումները.

1. եթե մենք ընդհանրացումներ չանենք, ապա կարող ենք միայն պարզունակ մտքեր արտահայտել

2. մարդու խորքային էությունը ավելի շատ մարմնական արժեքներ ունենալու մեջ է

3. փիլիսոփայությունը մարդուն հնարավորություն է տալիս վեր գտնվել իր կյանքի կոնկրետ պայմաններից

4. հոգեւոր արժեքներից զուրկ մարդը բարձրագույն էակ է

5. հերոսականությունը միայն մարդուն բնորոշ երեւույթ է, որը չկա կենդանական աշխարհում

6. ըստ Սոկրատեսի մարդը փոքրիկ հյուլե է տիեզերքում, որը ճանաչում է ինքն իրեն

7. մարդը որպես իրավական էակ չի ճանաչում բոլորի հավասարությունը օրենքի առաջ

53. Ընտրե՛լ սխալ պնդումները.

1.Պետական հարկադրանքն ունի կամայական, հայեցողական բնույթ։

2.Իրավական հարկադրանքը ազատության օրինական սահմանափակումն է ուժային ճնշման ճանապարհով։

3.Պետության գործառույթները ոչ թե քարացած, այլ շարժուն երևույթներ են։

4.Պետաքաղաքական վարչաձևի տեսակները երկուսն են՝ ժողովրդավարական և հակաժողովրդավարական։

5.Ըստ որոշումների ընդունման եղանակի պետական մարմինները լինում են կենտրոնական և տեղական։

54. Ընտրել ճիշտ պնդումները

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք
2. Արգելվում է մարդուն, իր կամքին հակառակ ենթարկել հոգեբանական հետազոտության
3. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից։
4. Յուրանչյուր ոք ունի ֆիզիկական, սոցիալական եւ հոգեբանական անձեռնմխելիության իրավունք։
5. Անձին համաներել կարող են Սահմանադրական դատարանի որոշմամբ կամ նախագահի հրամանով։

55. Նշվածներից որո՞նք են շուկայական տնտեսության առավելությունները

1. Մենաշնորհների առկայություն
2. Խթանում է գիտատեխնիկական առաջընթացը
3. Բարիքի և ծառայությունների որակի բարձրացման խթանում
4. Հնարավորության սահմաններում ապահովում է ռեսուրսների արդյունավետ օգտագործում
5. Ապահովում է տեղեկատվության ձեռքբերման համաչափություն
6. Սոցիալական հիմնախնդիրների առկայություն
7. Հասարակական բարիքների նկատմամբ մարդկանց պահանջմունքները բավարարված են

56. Ընտրե՛լ ճիշտ պնդումները. հոգեբանության բնագավառները դասակարգվում են

1. Անձի հոգեբանություն
2. Ենթախմբի հոգեբանություն
3. Ենթամշակույթի հոգեբանություն
4. Աշխատանքի հոգեբանություն
5. Համայնքային հոգեբանություն

57. Նշվածներից որո՞նք պետության հիմնական տնտեսական գործառույթներից չեն.

1. Եկամուտների վերաբաշխում
2. Արդարադատություն
3. Արտաքին բացասական ազդեցությունների նվազցմանն ու դրականի խրարուսմանն ուղղված գործունեություն
4. Կարիք
5. Հասարկական բարիքների արտադրություն
6. Ներգաղթի խրախուսում
7. Տեղեկատվության անհայմաչափության հաղթահարում

58 Ընտրել ճիշտ պնդումները

1. ՀՀ նախագահն ընտրվում է յոթ տարի ժամկետով
2. ՀՀ նախագահ կարող է լինել 35 տարին լրացած, վերջին վեց տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող անձը
3. Նույն անձը հանրապետության նախագահ կարող է ընտրվել մեկ անգամ
4. ՀՀ նախագահ ընտրվելու պարտադիր պայման է բարձրագույն կրթությունը
5. ՀՀ նախագահն ընտրվում է հինգ տարի ժամկետով
6. ՀՀ նախագահն ընտրվում է ձայների 50+1 մեծանասնությամբ
7. Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից

59. Նշված տարբերակներից որո՞նք են կոռուպցիայի միանշանակ դրսևորումներ.

1. Կաշառք ստանալ
2. Շորթում
3. Նվիրատվություն
4. Բարեգործություն
5. Թողտվություն
6. Լոբբինգ
7. Կլեպտոմանիա

60. Ընտրե՛ք ճիշտ պնդումները.

1.Հանգստանալու և սնվելու համար ընդմիջումը աշխատողին տրամադրվում է աշխատանքային օրվա կեսին, սակայն ոչ ուշ, քան աշխատանքը սկսելուց չորս ժամ հետո /երկու ժամից ոչ ավելի և կես ժամից ոչ պակաս տևողությամբ/։ Աշխատողը չի կարող ընդմիջմանը բացակայել աշխատավայրից։

2.Աշխատանքային օրվա ընթացքում հանգստանալու լրացուցիչ ընդմիջումները տրամադրվում են մինչև 16 տարեկան աշխատողներին՝ նվազագույնը 30 րոպե, իսկ հատուկ ընդմիջումները՝ հատուկ պայմաններում /օրինակ՝ մտավոր հուզական գերլարված վիճակում/ աշխատողներին։

3.Աշխատանքային օրերի միջև ընկած անընդմեջ հանգիստի տևողությունը չի կարող պակաս լինել 8 ժամից։

4.Ամենշաբաթյա անընդմեջ հանգստի դեպքում ընդհանուր հանգստյան օրը կիրակին է, իսկ հինգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ նաև շաբաթը։

5.Ամենամյա արձակուրդն օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին։ Այդ ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը /պաշտոնը/, վճարվում է միջին աշխատավարձ։